ՀՏԴ 376 : 159.9

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հ. Մ.Ավանեսյան

Երևանի պետական համալսարանի ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դ. Յ.Սարգսյան

Երևանի պետական համալսարանի անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայի գիտաշխատող, հոգեբանական գիտությունների թեկնածու

Հանգուցային բառեր և արտահայտություններ. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ, հոգեկան և ֆիզիկական խնդիրներ, հոգեբանական հետազոտություններ, մեթոդ, հիմնախնդիր:

Ժամանակակից հոգեբանության մեջ տարբեր հոգեկան և ֆիզիկական խնդիրներով երեխաների և մեծահասակների հոգեբանական ուսումնասիրությունների ռազմավարությունը մինչև այսօր դեռևս հստակեցված չէ: Սա կարելի է բացատրել նրանով, որ զարգացման խնդիրների ընդհանուր օրինաչափությունները բավականին բարդ են, իրենց մեջ կրում են անհատական կողմեր, ինչպես նաև սուղ են զարգացման խնդիրների ուսումնասիրության մեթոդները: Այդ անձանց զարգացման ընդհանուր և առանձնահատուկ օրինաչափություններն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն հատուկ հոգեբանության, այլ նաև ընդհանուր, անձի և սոցիալական հոգեբանության շրջանակներում: Անձի և զարգացման հոգեբանության ոլորտներում կատարված ուսումնասիրություններում բավականին փաստեր կան, որոնք խոսում են ֆիզիկական և հոգեկան խնդիրներով երեխաների զարգացման աստիճանական համակարգի գոյության մասին, սակայն դրանց խորքային հոգեբանական կողմերը թերի են:

Այս խնդիրների շուրջ հետազոտություններով հանդես եկան ոչ միայն արևմտյան, այլ նաև ռուսական հոգեբանության խոշոր ներկայացուցիչներ, ովքեր իրենց նոր մոտեցումներով և հետազոտություններով ուրույն տեղ են զբաղեցնում (Մ. Դյուֆուրան, Բ. Գ. Անանևը, Լ. Ս. Վիգոտսկին, Ա. Լ. Լուրիան և այլք): 20-րդ դարում Գ. Յ. Տրոշինի կողմից մեծ ներդրում եղավ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց զարգացման օրինաչափությունների ուսումնասիրման հարցում. 1915թ. հրա-

տարակվեց «Նորմալ և ոչ նորմալ երեխաների համեմատական հոգեբանություն» աշխատությունը: Այստեղ առաջին անգամ փորձարարական ճանապարհով ապացուցվեց, որ զարգացումը և՛ նորմայում, և՛ պաթոլոգիայում ունի ընդհանուր օրինաչափություններ [2]: Այս գաղափարն էլ հենց հիմք հանդիսացավ 20-ական թվականներին Լ. Ս. Վիգոտսկու հայացքների ձևավորման համար: Նրա կողմից կատարված հոգեբանական հետազոտությունները կազմեցին պատմամշակութային տեսության հիմքը, որի շնորհիվ հոգեբանության մեջ սկիզբ առավ զարգացման մի նոր փուլ [4]:

Հոգեբանության հետագա առաջընթացները (20-րդ դարի 50 ական թվականներին) կապված են Ա. Լ. Լուրիայի անվան հետ: Իսկ արդեն 20-րդ դարի երկրորդ կեսին Բ. Գ. Անանևի ղեկավարությամբ լայնածավալ ուսումնասիրություններ իրականացվեցին մարդու սենսոր-պերցեպտիվ ոլորտի զարգացման ուղղությամբ, որտեղ հատուկ տեղ էին զբաղեցնում զգայական խանգարումների շուրջ ուսումնասիրությունները: Նախորդ դարի 60-ական թվականներին իրականացվող հետազոտական աշխատանքներում մեծ ներդրումներով հանդես եկավ Ա. Ի. Զոտովը, ով Բ. Գ. Անանևի հետ միասին իրականացնում էր հետազոտական աշխատանքներ՝ ուսումնասիրելով հատկապես տեսողության խանգարումների ժամանակ իմացական գործընթացների փոխհատուցման գործառույթները [6]: Հայտնի է, որ տիֆլոհոգեբանության ամբիոնում Ա. Ի. Զոտովը հիմնեց առաջին գիտահետազոտական լաբորատորիան, որը զբաղվում էր կույր և թույլ տեսնող անձի հոգեբանության հիմնախնդիրների ուսումնասիրությամբ [7]: Այդ հետազոտությունների հիմքում ընկած էին Անանևի կողմից առաջադրված տեսողական-կինեսթետիկ-լսողական զգայությունների և օպտիկո-վեստիբուլյար դիրքորոշումների ուսումնասիրությունները: Հետազոտությունները բացահայտեցին, որ տեսողության բարդ ախտահարումները կամ խանգարումները հանգեցնում են մարդու ողջ զգայական համակարգի վերակառուցմանը, որն էլ հենց տեսողության փոխհատուցումն է:

Այս ոլորտներում հոգեբանական հետազոտություններն անց են կացվում առանձին տիպի խնդիրների ներքո: Բացի դրանից, նույն մեթոդիկաներով համեմատական սկզբունքով ուսումնասիրում են տարբեր խնդիրներով երեխաներին: Ամեն դեպքում կարևոր է այն հանգամանքը, որ նշված ժամանակաշրջանում ձևակերպվեցին ֆիզիկական և հոգեկան խնդիրներով երեխաների զարգացման հստակ օրինաչափությունները: Հատկանշական է այն փաստը, որ Լ. Ս. Վիգոտսկին առաջին հոգեբաններից էր, ով իրականացրեց լայնածավալ հոգեբանական համեմատական հետազոտություններ, սակայն անձնային ոլորտի լիարժեք բացահայտման համար դրանք բավական չէին: Նա նշում էր, որ հոգեկան և ֆիզիկական խնդիրների դեպքում մարդու զարգացման օրինաչափություններն ամբողջական կբացահայտվեն միայն այն ժամանակ, երբ միևնույն մեթոդ-

ների կամ տեխնիկաների օգնությամբ զուգահեռաբար հետազոտություններ իրականացվեն տարբեր խնդիրների դեպքում:

Ժամանակակից հեղինակներից Ա. Վ. Սամարովը, որպես արժեքավոր հետազոտություններ՝ ներկայացնում է Տ. Բ. Եգորովի, Ա. Ծ. Լոնինոյի և Տ. Բ. Լոզանովի կատարած ուսումնասիրությունները, որտեղ դիտարկում են լսողության, տեսողության և մտավոր խանգարումներով երեխաների պատկերային մտածողության համեմատական դիտման արդյունքները [10]: Այդ հետազոտությունները թույլ են տալիս հիմնավորել սահմանափակ կարողություններով երեխաների հոգեկանի զարգացման օրինաչափությունները: Այսպիսի հիմնարար օրինաչափություններ կարողացավ բացահայտել Լ. Ս. Վիգոտսկին հենց այն պատճառով, որ նա ի սկզբանե իր հետազոտությունները ծավալեց բոլոր տեսակի խնդիրներով երեխաների շրջանում: Օրինակ՝ նույն մեթոդիկայով նա ուսումնասիրել է տարբաբնույթ ախտահարումներ ունեցող երեխաների պատկերային մտածողությունը: Բոլոր տեսակի ախտահարումների ժամանակ նկատվել են շարժողականության(մոտորիկայի) խանգարումներ:

Վ. Ե. Կեմերովը անդրադարձել է նաև այս ոլորտներում հետազոտության մեթոդների ընտրության դժվարություններին: Նա նշում է, որ մեթոդիկաների սղության, բավարար չլինելու մասին դեռևս խոսել են շատ այլ հոգեբաններ. Պ. Պ. Բլոնսկի «Դժվար երեխաներ» գրքում բերում է հետազոտական տվյալներ, որոնք ապացուցում են, որ մտավոր ունակությունները չափող թեստերը կարող են անհուսալի լինելը առանձին ախտահարումների դեպքում: Նա գտնում էր, որ անհրաժեշտ է իրականացնել ոչ թե քանակական, այլ որակական հետազոտություններ: Ցանկացած որակական բնութագրում, վերջին հաշվով, հանգեցնում է քանակական տվյալների: Լ. Ս. Վիգոտսկին արդյունավետ հետազոտություններ իրականացնելու համար առաջ քաշեց ակտուալ և մերձակա զարգացման գոտի հասկացությունները և դրանք ուսումնասիրելու մեթոդիկաների մոդելը [5]:

Հաշվի առնելով այս բոլոր եզրակացությունները, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հոգեախտորոշման իրականացման վերաբերյալ նշված եզրահանգումները՝ կարող ենք ընդհանրացնել, որ այն, որպես կանոն, ենթադրում է փուլային գործընթաց կամ լոնգիտյուդ հետազոտություն:

Ինչպես տեսնում ենք, հոգեախտորոշիչ այսպիսի աշխատանքների իրականացումը բավականին բարդ է, տևական, լաբորատոր և ֆիզիոլոգիական սարքավորումներ պահանջող: Բարդությունը մասնավորապես այն է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետազոտական դաշտը մեր երկրում ապահովված չէ ժամանակակից հոգեֆիզիոլոգիական այլ չափագրական սարքավորումներով: Խնդիրներ կան նաև, որոնք պայմանավորված են հոգեբանական համապատասխան մեթոդների մշակմամբ, ստանդարտացմամբ, մայրենի

լեզվով կիրառությամբ, ինչի մասին վկայում են նաև հյարենական հետազոտությունները [1]:

Հաջորդ խնդիրը պայմանավորված է հետազոտության քանակական և որակական ուսումնասիրությունների անցկացմամբ: Այստեղ քանակական խնդիրը բխում է ընտրանքից, քանի որ երեխաների համապատասխան խնդիրներով, ախտահարումներով, տարիքային չափորոշիչներով պայմանավորված՝ հետազոտական խումբ կազմելը բավականին բարդ է [11]:

Այս հետազոտությունները հեղաշրջեցին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց վերաբերյալ հոգեբանության մեջ այն թյուր պատկերացումները, որոնց համաձայն նման անձը դիտվում էր հասարակության մեջ գործունեություն ծավալելու համար անկարող և մեկուսացվում էր հատուկ կրթօջախներում՝ սահմանափակելով նրա հնարավորությունները ու ռեսուրսները: Կարևորելով բոլոր այս հետազոտությունները՝ Բ. Գ. Անանևն առաջ քաշեց մարդու ուսումնասիրության համալիր հետազոտության, անձի ամբողջական ընկալման գաղափարը, որը հանդիսացավ Բ. Գ. Անանևի հայեցակարգային համակարգի հիմքը [3]: Նա հիմնավորեց հոգեբանության մեջ այն կարևոր միտքը, համաձայն որի՝ մարդու հատկությունների և գործառույթների ներառումը տանում է նրան ամբողջականացման, և այն իրականացվում է զգայական-պերցեպտիվ տարբեր մակարդակներից միչև ինտելեկտուալ բնութագրական մակարդակը:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք ասել, որ դեռևս այսօր էլ հոգեբանական փորձարարական և հոգեախտորոշիչ այս հիմնախնդիրները շարունակվում են մնալ արդիական, իսկ բազմաթիվ հիմնախնդիրներ՝ դեռ չպարզաբանված [2]: Այնուամենայնիվ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հոգեկանի փորձարարական ուսումնասիրություններ իրականացնելու նոր ռազմավարության, նոր մեթոդաբանության և հետազոտական ծրագրերի մշակման գործընթացը զարգանում է: Դրանով հետաքրքրվում են նաև հոգեբանության այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են անձի, փորձարարական և զարգացման հոգեբանությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավանեսյան Հ.Մ., Ժամանակակից հոգեախտորոշման գիտագործնական հիմնահարցերը/ Հանդես՝Հոգեբանություն և կյանք, 2005, N4,Եր., Էջ 119-128:

2. Սարգսյան Դ.Յ., Անձի անվտանգության հոգեբանական գործոնների դերը կենսագործունեության տարբեր պայմաններում, Ատենախոսության սեղմագիր, ԺԹ.00.01 <Հոգեբանության տեսություն և պատմություն>, Եր.,2013, 24 էջ:

3. Ананьев Б. Г. – Человек как предмет познания (3-е издание) - СПБ.: Питер, 2001, 288 с.

4. Выготский Л. С. – Собрание сочинений: В 6-ти т. Том. 5 /Основы дефектологии/, М.: Педогогика, 1983, 386 с.

5. Выготский Л. С. – Собрание сочинений: В 6-ти т. Том 3. /Проблемы развития психики/, М.: Педагогика, 1983, 368 с.

6. Дабагян А. А. – Жизненные кризисы семей, имеющих детей с ограниченными возможностями здоровья // Ананьевские чтения – 2008, Психология кризисных и экстремальных ситуаций: Междисциплинарный подход// Материалы научно-практической конференции, 21-23 октября 2008, 140 – 141 с.

7. Зотов А. И. – Дефект зрения и психические особенности слепых и слабовидящих школьников. - Л. ЛГПН. А. П. Герцена. 1981, 3-18 с.

8. Методики психодиагностики в учебно-воспитательном процессе. Сост. Гришин В. В., Лушин П. В. – М.: ИКА “Москва”, 1990, 64 с.;

9. Носков Л. П. – Коррекционное обучение как основа личностного развития аномальных дошкольников, Дефектология, М.: Педагогика, 1989, 175 с.

10. Саматова А. В. – Дети а глубокими нарушениями зрения, Ростов н/Д.: Феникс, 2012, 92с.

11. Солнцева Л. И.- Адаптация диагностических методик при изучении детей с нарушениями зрения, Дефектология, И4, 1998, 9-15 с.

12. Трошин О. В., Жулина Е. В., Кудрявцев В. А. – Основы социальной реабилитации и профориентации, М.: ТЦ Сфера, 2005, 384 с.

РЕЗЮМЕ

ПРОБЛЕМЫ ИЗУЧЕНИЯ ПСИХОЛОГИЧЕСКИХ ОСОБЕННОСТЕЙ ЛИЦ С ОСОБЫМИ ПОТРЕБНОСТЯМИ В ОБРАЗОВАНИИ

Г. М. Аванесян

заведующий кафедрой общей психологии Ереванского государственного университета, доктор психологических наук, профессор

Д. Ю.Саркисян

исследователь научной лаборатории психологии личности и профессиональной деятельности Ереванского государственного университета, кандидат педагогических наук

В статье обсуждена проблема научного исследования и экспериментального планирования человека с особыми потребностями в образовании.

Проанализированы проблемы качества и количества эксперимента методологии и речевых методов рассказа. Историческое развитие методологии психологических свойств исследования лиц с особыми потребностями в образовании.

SUMMARY

THE PROBLEM OF STUDY PSYCHOLOGICAL FEATURES OF THE PERSON WITH SPECIAL EDUCATIONAL NEEDS

H. M. Avanesyan

Doctor of Psychological Sciences, Professor, Head of the Chair of General Psychology Yerevan State University

D. Yu. Sargsyan

Candidate of Pedagogical Sciences, Researcher of the Scientific Laboratory of Personality Psychology and Professional Activity Yerevan State University

The problem of research investigation and experimental planning of person with special educational needs are discussed in this article. The problems of quality and quantity experiment, of methodology and narrative language methods are analyzed. And the historical development of methodology of study psychological features of person with special needs is given in the article.